ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 պայմանագրում 2021 թվականի հունիսի 29-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

1.	Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 25.03.2021թ. N 415-Ն որոշում:
	Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
	Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր:
2.	Փոփոխության առաջացման պատճառ	Օրացուցային գրաֆիկի հաստատում:
	Փոփոխության նկարագրություն	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն:
	Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 կետ:

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
10.12.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 գնման պայմանագրի

ք. Երևան «29» «06» 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Արալպլաստ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ա. Ալլավերդյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.03.2021թ. N 415-Ն որոշումը և ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 10.12.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N1-ի:

1.1.2 Հաստատել 2021 թվականի աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N2-ի:

1.1.3 Պայմանագիրը լրացնել նոր N3 հավելվածով՝ համաձայն Համաձայնագրի հավելված N3-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի N1, N2 և N3 հավելվածները բաղկացած են մեկական էջերից և համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«Արալպլաստ» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Արշակունյաց 27/3
կառավարական տուն 3	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 2474500282840010
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 02240129
Հ/Հ 900011027605	
ՎՀՀ 02565827	Տնօրեն՝
Գլխավոր քարտուղար՝	
Ա. Մկրտչյան	Ա. Ալլավերդյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N1
10.12.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 գնման պայմանագրի
«29» «06» 2021թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N2
10.12.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների կատարման

Ծրագրի շրջանակներում օբյեկտի հաստատված նախագծով նախատեսված շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքները	Աշխատանքների կատարման ժամկետը
1	Նախապատրաստական և քանդման աշխատանքներ	Ոչ ուշ քան 60-րդ օրացուցային օրը
2	Բժշկական կենտրոնի 1-ին մասնաշենքի վերակառուցում	Ոչ ուշ քան 120-րդ օրացուցային օրը
3	Բժշկական կենտրոնի 2-րդ մասնաշենքի վերակառուցում	Ոչ ուշ քան 150-րդ օրացուցային օրը
4	Բժշկական կենտրոնի 3-րդ մասնաշենքի վերակառուցում	Ոչ ուշ քան 210-րդ օրացուցային օրը
5	Բժշկական կենտրոնի 3 մասնաշենքերում պատերի, միջնորմների, աստիճանների իրականացում	Ոչ ուշ քան 300-րդ օրացուցային օրը
6	Տանիքի վերակառուցում	Ոչ ուշ քան 390-րդ օրացուցային օրը
7	Բացվածքներ/դռներ, պատուհաններ/	Ոչ ուշ քան 480-րդ օրացուցային օրը
8	Ներքին ինժեներական կոմունիկացիոն ցանցեր	Ոչ ուշ քան 570-րդ օրացուցային օրը
9	Ներքին հարդարման աշխատանքներ	Ոչ ուշ քան 720-րդ օրացուցային օրը
10	Օժանդակ շինությունների, ենթակառուցվածքների և դիահերձարանի կառուցում	Ոչ ուշ քան 750-րդ օրացուցային օրը
11	Արտաքին կոմունիկացիոն ցանցեր	Ոչ ուշ քան 810-րդ օրացուցային օրը
12	Արևային կայանի կառուցում	Ոչ ուշ քան 870-րդ օրացուցային օրը
13	Տարածքի բարեկարգման աշխատանքներ և ցանկապատ	Ոչ ուշ քան 900-րդ օրացուցային օրը

***Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությանն առնչվող բոլոր փոփոխություններն անհրաժեշտ է նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ:>>:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027605
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

Վ. Եսայան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
«Արալպլաստ» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 27/3
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474500282840010
ՀՎՀՀ 02240129

Տնօրեն

Ա. Ալլավերդյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N2
10.12.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 գնման պայմանագրի
«29» «06» 2021թ. կնքված N 1 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների իրականացման 2021թ. հատկացված գումարների շրջանակում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ

Կատարման ենթակա աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ

N	Գումար	Կատարվելիք աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը
1	88 000 000	Ոչ ուշ քան 90-րդ օրացուցային օրը
2	220 000 000	Ոչ ուշ քան 180-րդ օրացուցային օրը

***Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությանն առնչվող բոլոր փոփոխություններն անհրաժեշտ է նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027605
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

Ա. Մելքումյան
(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
«Արալպլաստ» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 27/3
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474500282840010
ՀՎՀՀ 02240129

Տնօրեն՝

Ա. Ալլամերդյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N3
10.12.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 գնման պայմանագրի
«28» «06» 2021թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N3
10.12.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45451700/504	ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքներ	-	-	-	-	-	-	88 000 000	88 000 000	88 000 000	220 000 000	220 000 000	220 000 000	220 000 000

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:>>:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027605
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
«Արալպլաստ» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 27/3
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474500282840010
ՀՎՀՀ 02240129

Տնօրեն՝

Ա. Ալլավերդյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Արդշինբանկ

№ 652-5138

«24» 06 2021 թ.

ԵՐԱՇԽԻՔ N ՀԲԵՆ21/180-36
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԱՐԱԼՊԼԱՍՏ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև 10.12.2020թ.-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 պայմանագրից և դրա շրջանակներում կնքվելիք թիվ 1 Համաձայնագրից (այսուհետ երկուսը միասին՝ պայմանագիր) բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ բոլորը միասին՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Արդշինբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 22,000,000.0 /քսաներկու միլիոն/ ՀՀ դրամ գումար (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև պայմանագրով պրինցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործառնական տնօրեն՝ Հարություն Իսպիրյան

Գլխավոր հաշվապահ՝ Հովհաննես Մկրտիչյան

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0015, Գր. Լուսավորիչ 13
(+37412) 222222
office@ardshinbank.am
www.ardshinbank.am

Արդշինբանկ

№ 652-5139

«24» 06 2021թ.

ԵՐԱՇԽԻՔ N ՀԲԵՆ21/181-36
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԱՐԱԼՊԼԱՍՏ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից 10.12.2020թ.-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 պայմանագրով և դրա շրջանակներում կնքվելիք թիվ 1 Համաձայնագրով (այսուհետ երկուսը միասին՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «Արդշինբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 66,000,000.0 /վաթսունվեց միլիոն/ ՀՀ դրամ գումար (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև պայմանագրով բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքն ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործառնական տնօրեն՝ Հարություն Իսպիրյան

Գլխավոր հաշվապահ՝ Հովհաննես Մկրտիչյան

«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0015, Գր. Լուսավորիչ 13
(+37412) 222222
office@ardshinbank.am
www.ardshinbank.am